ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Գետիկ 5 փող. 2 շենք
Էլ. փոստ Getik0272@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

01 հունիսի 2017 թվականի N 3 գ.Գետիկ

ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԱՆ ՆԵՐՔԻՆ ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ-ի № 731-Նորոշմամբ, 15.05.2006թ-ի № 912-Ն որոշման 27-րդ կետով, 29.12.2005թ-ի № 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գետիկ գյուղի փողով 2 տուն 10 բնակիչ Գայանե Սահակյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող և իր կողմից փաստացի զբաղեցրած տան ներքին ձևափոխման աշխատանքներն օրինականացնելու, տարածք առանձնացնելու և առանձնացված հատվածի համար հասցե տրամադրելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարված ձևափոխման աշխատանքները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1. Գեղարքունիքի մարզ, գ. Գետիկ, փողոց 2 տուն 10 հասցեում՝ Գայանե Սահակյանի կողմից տան 2րդ հարկում կատարված ներքին ձևափոխությունները ճանաչել օրինական:
2. Առանձնացվող 96.8 քմ մակերեսով հողամասին, որի վրա առկա է առաջին հարկում 43.5քմ արտաքին, 34.68 քմ ներքին, երկրորդ հարկում 82.65 քմ արտաքին, 63.54 քմ ներքին մակերեսներով տունը, 13.65 քմ մակերեսով հարթակը և 14.25 քմ մակերեսով պատշգամբը, տրամադրել գ. Գետիկ, փողոց 2 տուն 10/1 հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Այունց